Ձև N4

Տեղեկանք

2016 թվականի գերակա խնդիրների և միջոցառումների ծրագրի տարեկան իրականացման արդյունքների

Միջոցառումների իրականացման արդյունքների վերաբերյալ				
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների կատարման արդյունքները	Կարծիք
1	2	3	4	5
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	Հավելված 1, կետ 35	«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը 29.06.2016 թվականի թիվ 01/16.2/2307-16 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ: ՀՀ Ազգային ժողովի կողմից օրինագիծն ընդունվել է 2016թվականի հոկտեմբերի 20-ին:	
	Հավելված 1, կետ 36	«Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ կառավարության կողմից 2016թ. հուլիսի 29-ին հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության N29 արձանագրային որոշումը:	
	Հավելված 1, կետ 37	«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը 30.08.2016թ. №01/16.1/3574-16 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ: ՀՀ Ազգային Ժողովի կողմից օրինագիծն ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին:	
	Հավելված 1, կետ 38	«Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտի ռազմավարական ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ կառավարության կողմից 2016 թվականի դեկտեմբերի 8-ին հավանության է արժանացել «Հայաստանի 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» N 49 արձանագրային որոշումը:	
	Հավելված 1, կետ 39	«Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների 6-րդ համաժողովի նախապատրաստման ու անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը	Հաշվի առնելով այն, որ 2016 թվականին հանրապետությունում նշվում է տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 20-ամյա հոբելյանը՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը առաջարկել է Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների 6-րդ համաժողովի փոխարեն կազմակերպել հոբելյանական ընդունելություն՝	

		ՀՀ կառավարություն ներկայացնելը	ապահովելով տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, մասնավորապես՝ համայնքների ղեկավարների լիակազմ մասնակցությունը, ինչը հնարավոր չէր լինի համաժողովի շրջանակներում: ՀՀ կառավարության 04.11.2016թ. N 02/24.12/17214-16 գրությամբ այդ առաջարկությունն ընդունվել է ի գիտություն: Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 20-ամյակին նվիրված հանդիսավոր նիստը և հոբելյանական միջոցառումները կազմակերպվեցին 2016 թվականի նոյեմբերի 15-ին՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում:	
Գերակա խնդիրների իրականացման արդյունքների վերաբերյալ				
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերեկա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**	**Կարծիք**
1	2	3	4	5
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	**<u>Հավելված N 2</u>** **Կետ20.**	**Համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերի շարունակականության ապահովում** - խոշորացման գործընթացի կիրարկումն ապահովող անհրաժեշտ իրավական ակտերի մշակում	Մշակվել են «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:Նախագծերը 07.06.2016թ. №01/16.1/1884-16 գրությամբ ներկայացվել են ՀՀ կառավարության աշխատակազմ: Հունիսի 17-ին ՀՀ Ազգային ժողովը ընդունել է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքները, որոնց համաձայն՝ ՀՀ Արարատի մարզի Ուրցաձոր, ՀՀ Շիրակի մարզի Ամասիա, Աշոցք, Սարապատ, Արփի, ՀՀ Սյունիքի մարզի Գորիս, Մեղրի, Տեղ, Գորայք, ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք, Ջերմուկ, Զառիթափ, ՀՀ Տավուշի	

		-այցելություններ պիլոտային ծրագրերում ներառված համայնքներ՝	մարզի Նոյեմբերյան, Այրում, Կողբ համայնքներում համայնքների միավորման միջոցով ձևավորվել են համայնքային փնջեր: Իրականացվել են վերլուծություններ՝ ՀՀ Արարատի մարզի Ուրցաձոր, ՀՀ Շիրակի մարզի Ամասիա, Աշոցք, Սարապատ, Արփի, ՀՀ Սյունիքի մարզի Գորիս, Մեղրի, Տեղ, Գորայք, ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք, Ջերմուկ, Զառիթափ, ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան, Այրում, Կողբ խոշորացված համայնքային փնջերի ծրագրային առաջնահերթությունների վերաբերյալ, ինչի արդյունքում հրապարակվել է այդ վերլուծությունների ամփոփ հաշվետվությունը (այն զետեղված է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության պաշտոնական կայքում): Սեպտեմբերի 18-ին ՀՀ Արարատի մարզի Ուրցաձոր, Սյունիքի մարզի Գորիս, Մեղրի, Գորայք, Տեղ, Տավուշի մարզի Նոյեմբերյան, Կողբ, իսկ հոկտեմբերի 2-ին՝ ՀՀ Շիրակի մարզի Ամասիա, Աշոցք, Արփի, Սարապատ, Վայոց ձորի մարզի Վայք, Ջերմուկ, Զառիթափ համայնքներում կայացել են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Խոշորացված համայնքների ավագանիների նիստերի ընթացքում ընդունվել են ավագանու կանոնակարգերը, համայնքում հանրային բաց լսումների կամ քննարկումների կազմակերպման և անցկացման, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ներկայացուցչի թեկնածությունը ներկայացնելու և համաձայնեցնելու կարգերը: Հաստատվել են համայնքների զարգացման ծրագրերը և բյուջեները: Նշանակումներ են կատարվել բնակավայրերի վարչական ներկայացուցիչների պաշտոններում: Վարչատարածքային բարեփոխումների ծրագրի շրջանակներում կիրականացվեն ներդրումային ծրագրեր խոշորացվող համայնքներում՝ ԱՄՆ ՄԶԳ (8.6 մլն ԱՄՆ դոլար) և Շվեյցարական դաշնային զարգացման գործակալության (2,4 մլն ԱՄՆ դոլար) ֆինանսավորմամբ: Համայնքների բնակիչներին, տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվում է տեղեկատվություն՝ համայնքների խոշորացման նպատակների, առավելությունների, ռիսկերի	

		տեղական ինքնակառավարման մարմինների և բնակչության հետ խոշորացման գործընթացի վերաբերյալ իրազեկող ու պարզաբանող բնույթի հանդիպումներ անցկացնելու նպատակով - պիլոտային ծրագրերում ներառված համայնքներում միասնական ցանցային կառավարման էլեկտրոնային համակարգերի ստեղծման աշխատանքների իրականացում:	վերաբերյալ: Վեր են հանվել և գույքագրվել այդ համայնքների բոլոր հիմնախնդիրները՝ ըստ առաջնահերթության, հետագա ծրագրերում ընդգրկելու նպատակով: Մինչև ՀՀ Ազգային Ժողովի քննարկումները շահագրգիռ համայնքների ՏԻՄ-երի մասնակցությամբ կազմակերպվել և անց են կացվել խորհրդարանական լսումներ: Առանձին աշխատանքային խմբեր զբաղվում են խոշորացվող համայնքներում ընդհանուր տեղեկատվական ցանցի ստեղծման աշխատանքներով, ինչի նպատակն է՝ բնակիչների համար ստեղծել առավել նպաստավոր պայմաններ՝ տեղում ծառայություններից օգտվելու համար: Մեղրի, Գորիս, Զառիթափ, Վայք, Ջերմուկ և Ուրցաձոր խոշորացված համայնքներում գործարկվել է Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի՝ (ՀԿՏՀ) խոշորացված համայնքի համար մշակված տարբերակը: Տեղեկատվական այս համակարգը, որում ներառվում են համայնքապետարանի գործառույթներին առնչվող տեղեկատվության կենտրոնացված շտեմարանները, հնարավորություն է ընձեռում մեկ ընդհանուր տեղեկատվական միջավայրում ներառել համայնքի կենտրոնի և վարչական ներկայացուցիչների գրասենյակները, բնակիչներին տրամադրել տարբեր տեղեկանքներ՝ համայնքի բոլոր բնակավայրերից:	